ՀՀԿ

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

30 հունիս, 2023 թվականի № 43-Լ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌՈՒՍՏԱԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆ ՎՃԱՐԵԼՈՒ, ՏԱՐԵԿԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԶՈՒՏ ՇԱՀՈՒՅԹԻ ԲԱՇԽՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեսալսողական մեդիայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերով, 26-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետով և 27-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետով, «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասով, 49-րդ, 50-րդ հոդվածներով և 67-րդ հոդվածի 1-ին մասի 13-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածի 2-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշման հավելված 1-ով հաստատված «Կանոնադրական կապիտալում պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող առևտրային կազմակերպությունների շահույթի բաշխման և պետության բաժնեմասից ստացվող շահութաբաժինների հաշվարկման և վճարման կարգի» 3-րդ, 12-րդ և 13-րդ կետերով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2023 թվականի թվականի հունիսի 29-ի N 01/3-3/12637-2023 գրությունը և հաշվի առնելով այն հանգամանքը, որ Հանրային հեռարձակողի խորհուրդը հանդիսանում է «Հայաստանի հանրային հեռուստաընկերություն» փակ բաժնետիրական ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) կառավարման մարմինը և Հանրային հեռարձակողի խորհրդին են վերապահված Ընկերության հիմնադրի անունից հանդես եկող լիազորված մարմնի իրավասությունները՝ Հանրային հեռարձակողի խորհուրդը ո ր ո շ ու մ է.

1. Ընկերության կանոնադրական կապիտալում 100 տոկոս պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց 2022 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարել տարեկան շահութաբաժին՝ սույն որոշման 2-րդ կետով հաստատված չափով:
2. Հաստատել Ընկերության կողմից 2022 թվականի գործունեության արդյունքներով Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա տարեկան շահութաբաժնի չափը՝ 261 196 հազար Հայաստանի Հանրապետության դրամ:

3. Սահմանել Ընկերության 2022 թվականի գործունեության արդյունքներով ստացված 333 916 հազար Հայաստանի Հանրապետության դրամ կազմող զուտ շահույթի բաշխման հետևյալ ուղղությունները՝

ա) 72 720 հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով Ընկերության պահուստային հիմնադրամի համալրում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին համապատասխան.

բ) 261 196 հազար Հայաստանի Հանրապետության դրամի չափով Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց տարեկան շահութաբաժնի վճարում:

4. Ընկերության կանոնադրական կապիտալում պետության սեփականությունը հանդիսացող բաժնեմասի դիմաց Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման ենթակա շահութաբաժինը վճարել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի համապատասխան հաշվին՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի մարտի 3-ի N 202-Ն որոշմամբ սահմանված ժամկետում:

ՀԱՆՐԱՅԻՆ ՀԵՌԱՐՁԱԿՈՂԻ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՇԻՐԻՆՅԱՆ

30 հունիս, 2023 թվականի
ք. Երևան